ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ, ՄԱՐԻԵՏԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ. Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, *Երևան, «Տիգրան Մեծ», 2014, 420 էջ:*

Ներկայացվող աշխատանքում քննարկվել են մարդկությանը խորապես հուզող համամոլորակային (գլոբալ) հիմնախնդիրների էությունը, տեսակներն ու դասակարգումները, առաջացման, սրման պատճառները, դրանց փոխադարձ կապերը, դրսևորումները և լուծման հնարավոր ուղիներն աշխարհի տարբեր տարածաշրջաններում ու պետություններում: Գլոբալ հիմնախնդիրների ուսումնասիրությունն օգնում է յուրացնելու և կյանքում կիրառելու աշխարհագրության չափազանց կարևոր սկզբունքը՝ «մտածել գլոբալ, գործել լոկալ» չափանիշով:

Հատուկ ուշադրության են արժանացել մարդկության համամոլորակային հիմնախնդիրների առաջացման և լուծման տեսական-մեթոդաբանական հարցերի լուսաբանումը: Հեղինակներին հաջողվել է կողմնորոշվել դրանց միջառարկայական՝ փիլիսոփայական, քաղաքական, սոցիալական, տնտեսական և առավել խորությամբ աշխարհագրական ասպեկտների բնութագրումներում ու վերլուծություններում:

Համամոլորակային հիմնախնդիրների ուսումնասիրությունն ունի գործնական և միաժամանակ աշխարհայացքային շատ կարևոր նշանակություն: Գործնական, որովհետև այդ հիմնախնդիրներն այսօր արդեն ամբողջ հասակով ծառացած են մարդկության առջև և դրանց գործնական լուծումից է մեծապես կախված մարդկային գոյության հեռանկարը: Աշխարհայացքային, որովհետև պատկերացնելով համամոլորակային հիմնախնդիրների էությունն ու բովանդակությունը՝ կարող ենք ճիշտ մոտեցում ունենալ նաև լոկալ հարցերին, գտնել դրանց լուծման արդյունավետ ուղիները:

Աշխատությունը բաղկացած է վեց գլխից: Առաջին գլխում տրված են մարդկության համամոլորակային հիմնախնդիրների մեթոդաբանական-տեսական հիմնահարցերը, մյուս գլուխներում՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական, բնատնտեսական, սոցիալական, գիտական և այլ հիմնախնդիրների բնութագրում-

ներն ու վերլուծությունները. և առաջին հերթին՝ համաշխարհային պատերազմի կանխման ու խաղաղության պահպանման, բնապահպանական, էներգետիկական, հումքային, պարենային, Համաշխարհային օվկիանոսի յուրացման, ժողովրդագրական, թույլ զարգացածության և հետամնացության հաղթահարման, առողջության պահպանման, գլոբալ կրթության, մշակույթի և բարոյականության ճգնաժամի, տիեզերական տարածության խաղաղ յուրացման, Երկրի կլիմայի գլոբալ փոփոխության և անապատացման, ազգայնականության, հանցագործությունների, ահաբեկչության և թմրամոլության, ժողովրդավարության պակասի և այլ հիմնախնդիրները:

Նկատենք, որ աշխատանքում արծարծված խնդիրը տարբեր հիմնախնդիրների բացահայտմամբ, բնութագրմամբ ու վերլուծությամբ չի սպառվում: Բացահայտվել են յուրաքանչյուր գլոբալ հիմնախնդրի առաջացման կամ սրման պատճառները, բնորոշ գծերը, յուրահատկություններն ու տարածական առանձնահատկությունները, այդ հիմնախնդիրներից յուրաքանչյուրի լուծման կոնկրետ եղանակները, ձևերն ու մեխանիզմները: Մեր պատկերացմամբ մարդկության համամոլորակային հիմնախնդիրները մնում են աշխարհագրության համակարգի կարևոր օղակներից մեկը և գտնվում են նրա զարգացման առանցքային ուղղության վրա:

Աշխատանքում առկա են երեք տասնյակից ավելի խոսուն և հետաքրքիր գծապատկերներ՝ քարտեզների, դիագրամների, գրաֆիկների տեսքով, շուրջ մեկուկես տասնյակ աղյուսակներ, որոնք լրացնում և ամբողջացնում են տեքստը՝ տրամաբանական ավարտունություն հաղորդելով նրան: Վերջում տրված է նաև աշխարհագրական եզրույթների և հասկացությունների բառարան, ինչպես նաև ծավալուն գրականություն, որի հիման վրա շարադրվել է աշխատանքը:

Կատարված ծավալուն աշխատանքն ուշադրություն է գրավում ոչ միայն հայերեն և օտարալեզու գրականության տեսական և փաստական հարուստ, տարաբնույթ և խոսուն, ուշադրության արժանի տվյալներով, այլև նյութի մատուցման և լեզվական պատշաճ մակարդակով:

Հեղինակներն օգտագործել են ոչ միայն հայտնի աշխարհագետների (Վ. Կոտլյակով, Վ. Մակսակովսկի, Կ. Կոնդրատև, Ս. Լավրով, Յու. Գլադկի, Պ. Դիքեն, Ի. Ռոդիոնովա և ուրիշներ), այլև փիլիսոփաների, քաղաքագետների, սոցիոլոգների, տնտեսագետների, բնապահպանների (Է. Հուսերլ, Բ. Գվիշիանի, Ի. Ֆրոլով, Ա. Պեչե, Ա. Քինգ, Բ. Շնայդեր, Է. Պեստել, Յա. Տինբերգեն, Է. Լասլո, Լ. Բրաուն, Դ Մեդոուզ, Ջ. Ֆորստեր, Մ. Մեսարովիչ, Է. Շումախեր, Ռ. Հելբրոներ, Վ. Դանիլով-

Դանիլյան, այդ թվում նաև հայ հեղինակների)՝ գլոբալ հիմնախնդիրներին, գլոբալագիտությանը, գլոբալ փոփոխություններին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ:

Մասնագետների դատին հանձնվող սույն աշխատանքը չէր կարող ընդգրկել գլոբալ հիմնախնդիրների բոլոր տեսակները կամ առավել ևս դրանց լուծման հնարավոր բոլոր ուղիները: Այդպիսի նպատակ ոչ միայն դրված չէ, այլև հնարավոր էլ չէ ընդգրկել դրա ողջ ներկապնակը, որը բազում ինստիտուտների, միջազգային կազմակերպությունների, համաշխարհային ֆորումների ու վեհաժողովների, միջազգային աշխարհագրական և այլ կոնգրեսների բազմակողմանի քննարկման հարց է: Այդ համակարգի առանձին բաղադրիչները և դրանց հետ առնչվող տեսական ու մեթոդական մի շարք հարցեր սպասում են իրենց հետագա հետազոտողներին:

Յու. Մուրադյանի և Մ. Մուրադյանի համահեղինակությամբ լույս տեսած «Մարդկության համամոլորակային հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» ստվարածավալ աշխատանքը (420 էջ) աչքի է ընկնում իր ուշագրավ բովանդակությամբ, արծարծվող հիմնախնդիրների համակողմանի բացահայտմամբ ու վերլուծություններով, տրամաբանված, գրագետ շարադրանքով: Համոզված ենք, որ այն ըստ արժանվույն կընդունվի ոչ միայն մասնագետների, այլև ընթերցող լայն հանրության կողմից:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ,
ՀՈՎԻԿ ՍԱՅԱԴՅԱՆ